

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (75)

2017 թ.

Գլխավոր խմբագիր՝
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո ղ ի ղ ո լ ը

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան -

Ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - Ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - Ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
Էլ. կայք՝
[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
4.04.2017

Հանձնված է տպագրության
4.05.2017

СОЮЗ ЮРИСТОВ РА
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (75)
2017 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47

е-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.

Тираж: 500

Сдано в набор 04.04.2017

Подписано к печати 04.05.2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրական իրավունք

Վահե Ստեփանյան, Նաիրա Ալավերդյան
 «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ..... 5

Տիգրան Նաղդալյան
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ
 ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ 11

Պետության և իրավունքի տեսություն

Կարեն Ամիրյան
 ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՏԵՂԸ ԵՒ ԴԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ- ԻՐԱՎԱԿԱՆ
 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 21

Քաղաքացիական իրավունք

Նանե Սահակյան
 ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ (ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ)
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... 30

Արսեն Հովհաննիսյան
 ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՏԻՊԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
 ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ..... 38

Անի Մուրաֆյան
 ԿԵՂԾ ԵՎ ՇԻՆՇՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ 48

Շուշանիկ Ղուկասյան
 ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՍ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ՝ ՈՐՊԵՍ
 ԱՌԱՆՑ ՄԵՂՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՄ-ՈՒՄ,
 ԱՄՆ-ՈՒՄ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-Ի ՀԵՏ 57

Арег Малхасян
 ПРОБЛЕМА ОТВЕТСТВЕННОСТИ ЛИЦ, ОСУЩЕСТВЛЯЮЩИХ МЕДИЦИНСКУЮ
 ДЕЯТЕЛЬНОСТЬ, В АРМЯНСКОМ ПРАВЕ 65

Քրեական իրավունք

Ժենյա Ստեփանյան
 ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՅՏԻԴԻՎԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ
 ՀԱՏՎԱՆԻՇՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ..... 70

Մարինե Իսահակյան
 ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՄՏՔԻ, ԽՂՃԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
 ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 80

Արթուր Նահապետյան	
ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ «ԱԿՆՀԱՅՏ ԱՆԱՐԴԱՐ ԴԱՏԱՎՃԻՌ, ՎՃԻՌ ԿԱՄ ԴԱՏԱԿԱՆ ԱՅԼ ԱԿՏ ԿԱՅԱՑՆԵԼԸ» ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	88
Քրիստինա Խաչատրյան	
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳԵՐԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ	98
Իվետա Մանուկյան	
ԱՆՁԱՓՈՒՑՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ	106

Քրեական դատավարություն

Արսեն Մարտիրոսյան	
ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՈՐՔՈՒՄ	111
Сергей Жданов	
ТЕОРЕТИКО-ПРИКЛАДНЫЕ ПРОБЛЕМЫ УЧАСТИЯ СПЕЦИАЛИСТА В ПРАВООХРАНИТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ	121
Առնոլդ Վարդանյան	
ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԿԱԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ	130

ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՏԻՊԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Արսեն Հովհաննիսյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Իրավաբանական անձի՝ որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցներ, հետապնդելով նաև շահույթ ստանալու նպատակ, կնքում են գանազան գործարքներ՝ ստանձնելով ինչպես իրավունքներ, այնպես էլ այդ գործարքներից բխող որոշակի պարտականություններ: Երբ վերակազմակերպման գործընթացում իրավաբանական անձը դադարեցնում է գործունեությունը կամ ակտիվների մի մասը փոխանցում է այլ իրավաբանական անձի, առաջ է գալիս վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերի իրավունքների պաշտպանության հարցը, քանի որ դրա արդյունքում հնարավոր է՝ ստեղծվեն իրավիճակներ, երբ պարտատերերը չկարողանան ապահովել պահանջների պատշաճ բավարարում:

Վերակազմակերպվող իրավաբանական անձի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է լինի նաև իր պարտատերերի իրավունքները և օրինական շահերը չխախտելը, որովհետև ցանկացած վերակազմակերպում շոշափում է իրավաբանական անձի պարտատերերի շահերը, քանի որ պարտապանի դերում հայտնվում է փաստացի նոր սուբյեկտ, որի հետ պարտատերը ընտրելու հնարավորություն ունենալու դեպքում չէր կնքի պայմանագիր կամ կկնքեր էականորեն տարբերվող պայմաններով¹:

Այդ հանգամանքներն էլ հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով² (այսուհետ՝ Քաղաքացիական օրենսգիրք) սահմանվում են իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում պարտատերերի իրավունքների պաշտպանության երաշխիքները:

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձի վերակազմակերպման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը, իսկ սույն օրենսգրքի 63 հոդվածի 2-րդ կետում նախատեսված դեպքերում՝ արտաքին կառավարիչը պարտավոր են այդ մասին գրավոր տեղեկացնել վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերն իրավունք ունի պահանջելու պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ կամ դադարեցնելու վերակազմա-

¹ Տե՛ս **Соменков С.А.** Судьба договоров при реорганизации юридических лиц // Законы России: опыт, анализ, практика. 2006. № 8. էջ 27:

² Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998թ., ՀՕ-239:ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

կերպումը կամ վաղաժամկետ կատարելու պարտավորությունը և հատուցելու վնասները:

Նշված իրավունքներից սույն ուսումնասիրության շրջանակներում ուշադրության ենք արժանացրել պարտավորությունը վաղաժամկետ կատարելու և վնասների հատուցում պահանջելու պարտատիրոջ իրավունքները («Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի¹ 18-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված է նաև պարտավորությունը դադարեցնելու և դրա հետ կապված վնասների հատուցում պահանջելու պարտատիրոջ իրավունքը), ինչպես նաև վերակազմակերպման դադարեցում պահանջելու իրավունքը:

Քաղաքացիական օրենսգրքի 353-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանն իրավունք ունի պարտավորությունը կատարել ժամկետից շուտ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պարտավորության պայմաններով կամ չի բխում պարտավորության էությունից: Պարտավորությունների վաղաժամկետ կատարումը, պայմանավորված դրանց կողմերի ձեռնարկատիրական գործունեության իրականացմամբ, թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ պարտավորությունը ժամկետից շուտ կատարելու հնարավորությունը նախատեսված է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պարտավորության պայմաններով կամ բխում է գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

Այսինքն՝ օրենսդիրը նախատեսել է պարտավորությունների կատարման երկու առանձին պայմաններ: Մի դեպքում, երբ խոսքը ձեռնարկատիրական գործունեությանը չվերաբերող պարտավորությունների մասին է, ապա պարտավորությունը ժամկետից շուտ կատարելը թույլատրվում է, եթե դա արգելված չէ օրենքով կամ չի բխում պայմանագրից կամ պարտավորության էությունից, իսկ ձեռնարկատիրական գործունեության հետ կապված պարտավորությունների դեպքում գործում է հակառակ սկզբունքը: Օրենքը նախատեսում է վերակազմակերպման դեպքում պարտավորությունների վաղաժամկետ կատարման հնարավորություն՝ պայմանով, որ այդ կատարումը պահանջել է հենց պարտատերը, ուստի այս կարգավորումների տեսանկյունից Քաղաքացիական օրենսգրքի 66-րդ և 353-րդ հոդվածների միջև հակասություն առկա չէ:

Քաղաքացիագետները գտնում են, որ պարտատերերի վերը նշված իրավունքները պարտատերերի իրավունքների երաշխավորման կարևոր նախապայման են: Այսպես, Շերշևևիչը նշում է, որ միաձուլվող ընկերակցությունների պարտատերերին չի կարող չտրամադրվել իրավունք՝ պահանջելու, որպեսզի գույքը, որը նրանք վստահել են ընկերակցությանը, ծառայի իրենց շահերի բավարարմանը, մինչև կանցնի այլ անձի²:

Գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող իրավունքները պարտատերերը կարող են իրացնել անկախ այն հանգամանքից, թե վերակազմակերպումն ազդում է արդյոք իրենց տնտեսական շահերի վրա, և վերակազմակերպման արդյունքում ստեղծվող ընկերությունները կարող են պատշաճ կարգով կատարել պարտավորությունը:

¹ Տե՛ս ՀՀ օրենքը «Բաժնետիրական ընկերությունների մասին». ընդունվել է 25.09.2011թ., ՀՀՊՏ 2001.11.06/34(166):

² Տե՛ս **Шершевевич Г.Ф.** Учебник торгового права (по изданию 1914 года) - М., Спарк, 1994, էջ 165:

Տեսաբանների կարծիքով, նման իրավիճակը ստեղծում է որոշակի անհավասարակշռություն վերակազմակերպվող իրավաբանական անձի և վերջինիս պարտատերերի շահերի միջև¹: Այդ կապակցությամբ որոշ տեսաբաններ մշակել են քննարկվող խնդրի լուծման տարաբնույթ տարբերակներ, որոնցում առաջարկվում է իրավաբանական անձի պարտատերերին ծանուցել ոչ թե իրական վերակազմակերպման, այլ միայն հնարավոր վերակազմակերպման մասին՝ պարզելու համար այն պարտատերերին, որոնք կարող են ներկայացնել իրենց պարտավորությունները վաղաժամկետ կատարելու պահանջ, ինչպես նաև հաշվարկելու այն գումարի կամ գույքի մոտավոր արժեքը, որն անհրաժեշտ է այդ պահանջները բավարարելու համար²:

Նման մոտեցումը չի կարելի համարել արդարացված, տրամաբանական և արդյունավետ, քանի որ չի կարող ապահովագրել վերակազմակերպվող իրավաբանական անձին պարտատերերի կողմից իրենց պահանջների վաղաժամկետ կատարման պահանջի բավարարման հետ կապված ֆինանսական խնդիրներից: Առաջին հերթին այն պատճառով, որ նման պարագայում որևէ երաշխիք չկա, որ այսպես կոչված «նախնական» վերակազմակերպման ժամանակ պահանջներ չներկայացրած պարտատերերը նման պահանջներ չեն ներկայացնի հենց վերակազմակերպման ժամանակ: Բացի այդ, իրավաբանական անձի նման գործողությունները կարող են բացասաբար անդրադառնալ վերջինիս մասնագիտական գործունեության վրա, մանավանդ այն դեպքում, երբ իրավաբանական անձը իրականում չվերակազմակերպվի: Այդպիսի իրավիճակը իրավաբանական անձի պարտատերերի, ինչպես նաև պոտենցիալ կոնտրագենտների մոտ կարող է առաջացնել պարտապան իրավաբանական անձի ներքին կորպորատիվ հարաբերությունների անկայունության և ֆինանսական խնդիրների առկայության տպավորություն: Եվ բնական է, որ նման պայմաններում պոտենցիալ կոնտրագենտները չեն ցանկանա գործնական կապեր կառուցել այդպիսի կազմակերպության հետ, իսկ առկա կոնտրագենտները կձգտեն խզել ձևավորված գործնական կապերը:

Ընդհանրապես պարտատերերին իրենց պահանջների վաղաժամկետ կատարում պահանջելու իրավունքը կարելի է համարել արդարացված, քանի որ ցանկացած պարտատեր, մտնելով պարտավորական հարաբերությունների մեջ, ենթադրում է հարաբերությունների կայունություն, քանի որ պարտապանի փոփոխությունը մեկ այլ անձով կարող է էականորեն ազդել իր օրինական շահերի բավարարման մակարդակի վրա:

Պարտատիրոջ համար պարտապանի անձը կարևոր նշանակություն ունի, քանի որ մեկ պարտապանից կարող են ակնկալել պարտավորությունների ժամանակին և պատշաճ կատարում, մեկ այլնից, ընդհակառակը, նման ակնկալիքներ չունեն, քանի որ նա ոչ մեկ անգամ խախտել է պարտավորությունը³: Ուստի գտնում ենք, որ արդարացի է, երբ պարտատերը, ստանալով պարտապան իրավաբանական անձի վերակազմակերպման մասին ծանուցումը, չցանկանալով շարունակել

¹ St`u **Кулешов А.В.** Защита прав и интересов кредиторов в процессе укрупнения акционерного общества // Законодательство и экономика, 2010, № 10 (318), էջ 36:

² St`u **Зайцев О.Р.** К вопросу об обоснованности признания преобразования формой реорганизации // Цивилист, 2005, № 2, էջ 85:

³ St`u **Общее учение об обязательстве / Лунц Л.А., Новицкий И.Б.** - М.: Госюриздат, 1950. էջ 228:

հարաբերությունները անհայտ կոնտրադեմտների հետ, հնարավորություն ունենա դադարեցնելու այդ պարտավորությունները:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ օրենսդիրը, վերակազմակերպվող ընկերության պարտատերերին տալով բավականին լայն իրավունքներ, հաշվի չի առել վերակազմակերպվող ընկերության շահերը, քանի որ, օրինակ, այն դեպքերում, երբ պարտատիրոջ պահանջը ապահովված է գրավով, ապա հարց է ծագում, թե ինչու պետք է պարտատիրոջը իրավունք տալ ընկերությունից պահանջելու պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում¹:

Կարևոր է մատնանշել, որ քննարկվող իրավունքի առավել արդյունավետ, նպատակային և վերակազմակերպվող իրավաբանական անձին հնարավորինս քիչ ծանրաբեռնելու տեսանկյունից կարևոր կարգավորում է պարունակում «Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը², որի 16-րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է, որ պարտատիրոջ վերը թվարկված իրավունքներից չեն կարող օգտվել այն պարտատերերը, որոնց տրամադրվել է պարտավորությունը կատարելու բավարար համարվող երաշխիք, կամ պարտավորությունը ապահովված է գրավով: Ընդ որում, ապահովումը համարվում է բավարար, եթե պարտատերը համաձայնվել է ընդունել նման երաշխիքը, կամ պարտատիրոջը տրամադրվել է անհետկանչելի բանկային երաշխիք, որի վճարունակությունը հիմնավոր կասկածներ չի առաջացնում: Նման կարգավորումը նախ կանխում է անխտիր բոլոր պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու հնարավորությունը, բացի այդ՝ նվազագույնի է հասցնում նաև նման պահանջներ ներկայացնելու պատճառով վերակազմակերպվող իրավաբանական անձի մոտ հնարավոր ֆինանսական ռիսկերի առաջացումը, ընդհուպ՝ հնարավոր սնանկությունը: Գտնում ենք, որ Նախագծով առաջարկվող այս կարգավորումները կապահովեն ողջամիտ հավասակշռություն վերակազմակերպվող իրավաբանական անձի և վերջինիս պարտատերերի շահերի միջև:

Պարտատերերի շահերի երաշխավորման իրավական կարգավորումների ուսումնասիրության շրջանակներում ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ պարտատերերը իրավունք են ստանում պարտապանից պահանջելու պարտավորությունների վաղաժամկետ կատարման պատճառով առաջացած վնասների հատուցում:

Այս հարցի կապակցությամբ տեսության մեջ առկա են իրարամերժ տեսակետներ: Այսպես, հեղինակների մի խումբ գտնում է, որ վնասների հատուցում պահանջելու պարտատիրոջ իրավունքը հակասում է քաղաքացիաիրավական դոկտրինին, քանի որ վնասները իրավախախտման արդյունք են, և դրանք վերակազմակերպմամբ պայմանավորված պահանջելը կասկած է հարուցում, բացի այդ՝ նշվում է, որ վերակազմակերպումը չի համարվում իրավախախտում և հետևապես չի կա-

¹ Տե՛ս Ավետիսյան Վ.Պ., Հայաստանի Հանրապետության կորպորատիվ իրավունքի որոշ հիմնահարցեր // Ղատական իշխանություն, հունիս, 2013, 6 (167), էջ 63:

² Տե՛ս «Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, հոդված 16, աղբյուրը՝ <http://justice.am/legal/drafts>:

րող հիմք հանդիսանալ հարկադրանքի միջոցների, այդ թվում՝ վնասների հատուցում պահանջելու համար¹:

Հեղինակների մեկ այլ խումբ գտնում է, որ, ընդհակառակը, պարտատիրոջ նման իրավունքն ամբողջությամբ համապատասխանում է քաղաքացիական իրավունքի տրամաբանությանը մասնավորապես պարտատերերի շահերի պաշտպանության տեսանկյունից²:

Նշված հարցին պատասխանելու համար նախ փորձենք հասկանալ՝ ինչ է օրենսդիրը հասկանում վնաս ասելով:

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը:

Քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածը քաղաքացիական իրավունքների պաշտպանության միջոցների շարքում առանձնացնում է նաև վնասների հատուցում պահանջելը:

Քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Այսինքն, օրենքը վնասի հատուցումը որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության միջոց կիրառելը կապում է իրավունքի խախտման հետ, քանի դեռ անձի իրավունքը չի խախտվել, վնասի հատուցում պահանջելու իրավունք չի ծագում:

Այսինքն, պարզելու համար իրավաչափ է արդյոք, որ պարտատերը կարող է պահանջել վերակազմակերպվող իրավաբանական անձ-պարտապանից վնասների հատուցում, պետք է նախ և առաջ հասկանանք, թե պարտատիրոջ որ իրավունք է խախտվում վերակազմակերպման արդյունքում:

Այն հանգամանքը, որ վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերը իրենց պահանջների վաղաժամկետ կատարում կամ պարտավորության դադարեցում պահանջելիս կարող են կրել վնասներ, անհերքելի է: Որպես օրինակ կարելի է բերել այն դեպքը, երբ վարկի գումարի վաղաժամկետ մարումը հանգեց-

¹ Այդ մասին առավել մանրամասն տես՝ **Карлин А.А.** Реорганизация акционерного общества: дис. ... канд. юрид. наук - М., 2004. էջ 135, **Коровайко А.В.** Реорганизация хозяйственных обществ. Теория, законодательство, практика: Учебное пособие,- М.: Издательство НОРМА (Издательская группа - ИНФРА-М), 2001, էջ 38:

² Այդ մասին առավել մանրամասն տես՝ **Дивер Е.П.** Правовое регулирование реорганизации коммерческих организаций: дис. ... канд. юрид. наук. - М., 2002, էջ 175, **Тарасенко Ю.А.** Кредиторы: защита их имущественных прав: Учебно-практическое пособие. - М.: ЮрКнига, 2004, էջ 78:

նում է նրան, որ բանկը կամ վարկային կազմակերպությունը ստանում են ավելի քիչ տոկոսներ, քան ակնկալում էին պայմանագիրը կնքելիս:

Ընդհանրապես, իրավունքների պաշտպանություն ասելով գիտնականները հասկանում են օրենսդրությամբ նախատեսված միջոցների ամբողջություն, որոնցով քաղաքացիական իրավունքի սուբյեկտները հասնում են իրենց իրավունքների խախտումները կանխելուն, վերացնելուն, իրավունքը վերականգնելուն և իրավունքի խախտման արդյունքում առաջացած վնասները ծածկելուն¹:

Իրավունքների պաշտպանության միջոցների տակ հասկանում են նաև օրենքով նախատեսված հարկադրական բնույթի միջոցներ, որոնցով իրականացվում են խախտված (վիճարկվող) իրավունքների վերականգնումը, պաշտպանությունը և վնասների վերականգնումը²:

Իրավունքների պաշտպանության միջոցները մարմնավորում են նաև այն անմիջական նպատակը, որը իրավունքի պաշտպանության սուբյեկտը հետապնդում է՝ ենթադրելով, որ դրանց միջոցով կարող է հասնել իր իրավունքների խախտումները կանխելուն, վնասները հատուցելուն կամ իրավախախտման հետևանքները որևէ այլ կերպով վերացնելուն³:

Այսպիսով, օրենսդրական կարգավորումների և տեսության մեջ ներկայացված տեսակետների համադրությամբ կարող ենք եզրակացնել, որ վնասների հատուցման իրավունքը կապվում է իրավունքի խախտման հետ:

Նման պարագայում առաջանում է պարտատիրոջ և պարտապանի շահերի հավասարակշռման խնդիր, քանի որ օրենսդրական թերի կարգավորումների պարագայում, երբ բոլոր պարտատերերը, փաստերեն, կարող են պահանջել պարտավորությունների վաղաժամկետ կատարում և դրա հետ կապված վնասների հատուցում միաժամանակ, վերակազմակերպվող իրավաբանական անձի համար կարող են առաջանալ ֆինանսական լուրջ խնդիրներ:

Բացի այդ, գործող օրենսդրությունը չի նախատեսում որոշակի չափանիշներ կամ պայմաններ, որոնք դատարանը կարող է հաշվի առնել վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերի կողմից վնասների հատուցման պահանջները քննելիս՝ դրանք բավարարելու կամ մերժելու համար: Այսինքն, այն դեպքերում, երբ վերակազմակերպմամբ պայմանավորված՝ պարտատերերը կրում են վնասներ, նրանք կարող են պահանջել այդ վնասների հատուցում միայն դրանց առկայությունն ապացուցելու դեպքում:

Քննարկվող հարցի վերաբերյալ դատական պրակտիկայի բացակայությունը հնարավորություն չի տալիս հասկանալու, թե օրենսդրական թերի կարգավորման պայմաններում ինչպես են դատարանները լուծում տալիս նշված խնդիրներին:

Այս խնդրի վերաբերյալ հետքորժիր կարգավորումներ է պարունակում գերմանական իրավունքը: Մասնավորապես, սահմանվում է, որ վերակազմակերպման դեպքում վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերը ծանուցումը ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, կարող են պահանջել պարտավո-

¹ Տե՛ս **Брагинский М.И., Витрянский В.В.** Договорное право. Книга первая: Общие положения, М., 2001. էջ 776:

² Տե՛ս **Гражданское право: учебник: в 4 т. / отв. ред. Е.А.Суханов.** Т. 1: Общая часть. М., 2005. էջ 557, **Гражданское право / под ред. Б.М. Гонгало, Т.И.Илларионовой, В.А. Плетнева.** М., 2001. էջ 54:

³ Տե՛ս **Рожкова М.А.,** Средства и способы правовой защиты сторон коммерческого спора., М., 2006, էջ 84:

րությունների կատարման երաշխիքներ դրանց չկատարման ռիսկերի վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու դեպքում¹:

Անգլիական իրավունքում, ընդհակառակը, պարտատերերն ունեն վերակազմակերպման գործընթացի վրա ազդելու էական հնարավորություններ: Մասնավորապես, վերակազմակերպման, հիմնականում միացումների և միաձուլումների դեպքում անհրաժեշտ է ստանալ վերակազմակերպման նախագծի վերաբերյալ պարտատերերի համաձայնությունը²:

Ընդհանրապես, երբ խոսքը գործարարական հարաբերությունների մասին է, ապա մենք անխուսափելիորեն գործ ենք ունենում նաև գործարարական ռիսկի հետ, որը գործարարական գործունեության էական հատկանիշներից մեկն է:

Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Տեսության մեջ գոյություն ունի ռիսկի բնութագրման երեք կառուցակարգ՝ օբյեկտիվ, սուբյեկտիվ և դուալիստական:

Օբյեկտիվ տեսության համաձայն՝ ռիսկը օբյեկտիվ իրականության երևույթ է³: Սուբյեկտիվ տեսությունը ռիսկը բնութագրում է որպես անձի հոգեբանական վերաբերունքը իր գործողությունների կամ վարքագծի պատահական հետևանքների նկատմամբ⁴: Դուալիստական տեսությունը միավորում է այս երկու կառուցակարգերը և ռիսկը բնութագրում է որպես հնարավոր վնաս, իսկ դրա առաջանալու հնարավորության սպասումը՝ սուբյեկտիվ կատեգորիա, այն դեպքում, երբ ռիսկը օբյեկտիվ իրականության երևույթ է⁵:

Այսպիսով, «ռիսկ» կատեգորիան կարելի է բնութագրել այնպիսի հասկացությունների միջոցով, ինչպիսիք են վտանգը, սպառնալիքը, հնարավորությունը: Որևէ միջոց այնպիսի անբարենպաստ կամ բարենպաստ հետևանքների առաջացման հնարավորությունն է, որոնք հայտնի չէ՝ երբ տեղի կունենան⁶:

Պրոֆեսոր Բարսեղյանը գործարարական ռիսկը բնութագրում է որպես տնտեսվարման առանձնահատկություններով պայմանավորված և դրա վրա ազ-

¹ St´u Umwandlungsgesetz vom 28.Oktober, 1994 (BGB1. I S. 3210, (1995, 428)), zuletzt geandert durch Artikel 1 des Gesetzes vom 19. April 2007 (BGBl. I S. 542):

² St´u UK Companies Act, 2006, աղբյուրը՝ <http://www.legislation.gov.uk/>:

³ St´u **Малеин Н.С.** Гражданско-правовое положение личности в СССР. - М.: Наука, 1975. - էջ 184, **Кабышев О.А.** Правомерность предпринимательского риска // Хозяйствои право. - 1994. - № 3. - էջ 50, **Собчак А.А.** О некоторых спорных вопросах юридической ответственности // Правоведение. - 1968. - № 1. - էջ 55:

⁴ St´u **Ойгензихт В.А.** Категория риска в советском гражданском праве / В.А.Ойгензихт // Правоведение. - 1971. - № 5. - էջ 68, **Копылов В.А.** О категории риска в гражданском праве // Защита субъективных прав: История и современные проблемы. - Волгоград: ВолГУ, 2000. - էջ 53:

⁵ St´u **Мезрин Б.Н.** О юридической природе риска в советском гражданском праве // Гражданское право и способы его защиты: Сб. науч. тр. - Свердловск: СГУ, 1974. - էջ 48:

⁶ St´u **Собчак А.А.** О некоторых спорных вопросах юридической ответственности // Правоведение. - 1968. - № 1. - էջ 55:

դող տարաբնույթ հանգամանքների ներգործության հետևանքով վնասներ կրելու կամ օգուտներ ստանալու հնարավորության անորոշություն¹:

Նման ռիսկեր առաջանում են նաև կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացում: Ընդ որում, այդ ռիսկերը վերաբերում են ինչպես վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերին, այպես էլ հենց վերակազմակերպվող սուբյեկտին: Վերակազմակերպվող իրավաբանական անձը, կայացնելով վերակազմակերպման մասին որոշում, պետք է գիտակցի, որ նման քայլը կարող է պարտատերերի մոտ առաջացնել անվստահության տպավորություն կամ որ ավելի վատ՝ պարտավորությունները կատարելուց խուսափելու հնարավորություն: Եվ բնական է, որ պարտատերերը կցանկանան դադարեցնել իրենց հարաբերությունները տվյալ սուբյեկտի հետ:

Այսինքն, իրավաբանական անձը պետք է կանխատեսի իր որոշման հնարավոր բացասական հետևանքները կրելու ռիսկը:

Գործարարական հարաբերություններում պարտավորության պատշաճ կատարումը համարվում է գերակա նպատակ, և ցանկացած պարտատիրոջ համար ամենակարևորը իր պահանջների բավարարում ստանալն է: Ուստի գտնում ենք, որ իրավաբանական անձի վերակազմակերպումը չի կարող հանգեցնել քաղաքացիաիրավական, մասնավորապես՝ պարտավորական հարաբերությունների բնականոն ընթացքի խաթարմանը, և պարտավորությունների կատարումը պետք է գերակա լինի սեփական բիզնեսի զարգացման կամ վերակազմավորման ցանկությունից:

Վերը նշվածը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ բոլոր այն դեպքերում, երբ իրավաբանական անձի վերակազմակերպումը բացառապես վերջինիս կամքի ազատ արտահայտման արդյունք է, այդ թվում՝ պայմանավորված որոշակի տնտեսական պայմանների փոփոխությամբ, ապա այդ վերակազմակերպումը չպետք է ավարտվի այնքան ժամանակ, քանի դեռ պարտատերերի պահանջները բավարարված չեն: Այսինքն, կամ այդ պարտատերերին պետք է տարամադրվեն այնպիսի երաշխիքներ, որոնք, պարտատերերն ընդունելով, կհամաձայնվեն պարտքի փոխանցմանը, կամ վերակազմակերպումը պետք է կասեցվի մինչև պարտավորության պատշաճ կատարումը:

Վերը նշված բոլոր վերլուծություններն ու տեսակետները վերաբերելի են իրավաբանական անձի կողմից սեփական կամքով իրականացվող վերակազմակերպումներին, հարկադիր վերակազմակերպումների դեպքում, որոնք նույնպես հետապնդում են հանրային շահերի պաշտպանության նպատակ:

Քաղաքացիական օրենսգիրքը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը չեն առանձնացնում պարտատերերի իրավունքների պաշտպանության մեխանիզմները կամավոր և հարկադիր վերակազմակերպման դեպքերում, որպիսի մոտեցումը համարում ենք չարդարացված՝ հետևյալ հանգամանքների հաշվառմամբ:

Հարկադիր վերակազմակերպումն իրականացվում է իրավաբանական անձի կամքից անկախ և հանդիսանում է պետության վերաբերմունք կատարված իրավախախտմանը, հետևապես ինչպես ցանկացած իրավախախտման դեպքում, այս պարագայում էլ հետապնդում է հանրային շահերի պաշտպանության նպատակ:

¹ Տե՛ս **Քարտեղյան Տ.Կ.** Գործարարական իրավունք, դասագիրք, Եր., ԵՊՀ իրատ., 2009, էջ 37:

Ֆրանսիայում, օրինակ, որտեղ առկա են իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում պարտատերերի իրավունքների երաշխավորման գործուն համակարգեր, վերջիններս չունեն իրենց պահանջներով վերակազմակերպման իրականացման գործընթացին խոչընդոտելու էական հնարավորություն: Մասնավորապես, երբ պարտատերերը ներկայացնում են իրենց առարկությունները վերակազմակերպման վերաբերյալ, դա դեռ չի նշանակում, որ առաջադրված պահանջները անպայմանորեն պետք է անմիջապես կատարվեն, եթե դա կարող է հանգեցնել կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացմանը և սահմանափակել կազմակերպության արդյունավետ վերակազմակերպում կատարելու հնարավորությունը¹:

Ուստի գտնում ենք, որ օրենսդրությամբ պետք է նախատեսել հարկադիր վերակազմակերպման դեպքում պարտատերերի շահերի երաշխավորման այլ կառուցակարգեր:

Մասնավորապես, պարտատերերը չպետք է իրավունք ստանան պահանջելու վերակազմակերպման դադարեցում, իսկ բոլոր այն դեպքերում, երբ իրենց պահանջները մինչև վերակազմակերպման ավարտը չեն բավարարվում, ապա չպետք է իրավունք ստանան դատական կարգով հասնելու վերակազմակերպման կասեցման կամ այլ կերպ խոչընդոտեն դրա ավարտը: Հակառակ պարագայում, երբ, օրինակ, պարտատերը պահանջում է դադարեցնել վերակազմակերպումը կամ մինչև իր պահանջների բավարարումը արգելել պարտապան իրավաբանական անձին վերակազմակերպվել (նման պահանջ կարող է ներկայացվել հայցի ապահովման միջոցների շրջանակում), կարող են առաջանալ հարկադիր վերակազմակերպման ողջամիտ ժամկետում իրականացման ռիսկեր, որի հետևանքով հարկադիր վերակազմակերպումը չի հասնի նախանշված նպատակին: Այսինքն, երբ որևէ իրավաբանական անձի հարկադիր վերակազմակերպումն անհրաժեշտ է իրականացնել որոշակի ժամկետում Սահմանադրությամբ և օրենքով ամրագրված հանրային շահերի ապահովման նպատակով, և վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերի կողմից իրենց իրավունքների իրացումն ապահովելը բացառում է նախանշված ժամկետում և կարգով իրականացնել հարկադիր վերակազմակերպումը, վտանգվում է հանրային շահերի ապահովման սահմանադրաիրավական կառուցակարգը:

Գտնում ենք, որ հարկադիր վերակազմակերպումների պարագայում պարտատերերը պետք է իրավունք ստանան պահանջելու միայն պարտավորությունների վաղաժամկետ կատարում, պարտավորության դադարում և դրանց հետ կապված վնասների հատուցում, պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, ինչպես նաև երաշխիքներ առ այն, որ վերակազմակերպման արդյունքներից անկախ՝ նրանց՝ վերակազմակերպման գործընթացի ժամանակ ներկայացած և չբավարարված պահանջները ապագայում կբավարարվեն:

¹ Sté u Code de commerce de France, 2010, աղբյուրը՝ www.legifrance.gouv.fr:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЗАЩИТЫ ПРАВ КРЕДИТОРОВ РЕОРГАНИЗУЕМОГО ЮРИДИЧЕСКОГО ЛИЦА КОРПОРАТИВНОГО ТИПА

Арсен Оганисян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

Данная статья посвящена некоторым проблемам, связанным с правом требования кредиторов реорганизуемого юридического лица досрочного исполнения обязательств (прекращение обязательств) и возмещения вреда в связи с этим, а также прекращения реорганизации. В результате исследования было предложен механизм, согласно которому указанные права кредиторов при добровольной реорганизации должны быть реализованы до окончания реорганизации, а в случае принудительной реорганизации удовлетворение требований кредиторов должно быть подвергнуто определенным ограничениям во избежание обременения и препятствования процессу реорганизации.

SOME ISSUES OF IMPLEMENTATION OF CREDITORS' RIGHTS OF OF THE REORGANIZED CORPORATE LEGAL ENTITY

Arsen Hovhannisyan

Post-graduate student of the YSU Chair of Civil Law

This article deals with some issues related to the right to the claims of creditors of the reorganized legal entity early performance of obligations (termination obligations) and compensation for damage in connection with this, as well as the termination of the reorganization. The study suggests a mechanism by which these rights of creditors under the voluntary restructuring should be implemented before the end of the reorganization, and in case of forced reorganization, satisfaction of creditors' claims should be subject to certain restrictions in order to avoid burdening and obstruction of the reorganization process.

Բանալի բառեր - վերականգնելիություն, պարտավորություն, վաղաժամկետ կատարում, վնաս, գործարարական ռիսկ

Ключевые слова: реорганизация, обязательство, досрочное исполнение обязательств, убыток, предпринимательский риск.

Key words: reorganization, obligation, damage, bussiness risk, early performance.